

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Տավուշի մարզի Իծաքար և Չինչին համայնքների 41 ընտանիքի տների տանիքների հիմնանորոգում, նոր պատուհանների և մուտքի դռների տեղադրում: Համայնքի բնակարանային պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ, Երևան, Կարապետ Ուլնեցու 14: ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն:
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ: Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	72,700,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Տավուշի մարզի Իծաքար (36 ընտանիք) և Չինչին (5 ընտանիք) համայնքների սոցիալապես անապահով 41 ընտանիքներ: Ընտանիքները ընտրությունը կատարվել է «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի ընտանիքների ընտրության հանձնախմբի առաջարկությամբ՝ համայնքի ղեկավարների կողմից ներկայացված առավել կարիքավոր ընտանիքներից:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի մարտի 10-ից մինչև դեկտեմբերի 30-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարական նյութերի ձեռքբերում և աշխատանքների իրականացում՝ 72,700,000 դրամ, 10.03.2021 թ. - 30.12.2021 թ.
10.	Ձեռքբերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Մետաղապլաստե պատուհանների ձեռքբերում՝ 504 քմ - 15,120,000 դրամ Տանիքի թիթեղի ձեռքբերում՝ 11040 քմ - 25,616,000 դրամ Փայտանյութի ձեռքբերում՝ 134 խմ – 17,420,000 Մուտքի դռների ձեռքբերում՝ 41 հատ – 2,870,000 դրամ Այլ շինարարական նյութերի և գործիքների ձեռքբերում՝ - 3,374,000 դրամ Շինարարական աշխատանքների իրականացում՝ - 8,300,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ